«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՏՆՕՐԵՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՎՍԿ

2022

Հավելված

«Մասնագիտական կրթության որակի
ապահովման
ազգային կենտրոն» հիմնադրամի
հավատարմագրման հանձնաժողովի
2023թ. ապրիլի 19-ի թիվ 1-Լ որոշման

Բովանդակություն

2022-ի «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հիմնական ուղենիշները և ձեռքբերումները	3
Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում	4–14
Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում	15–17
Ռազմավարական նպատակ 3՝ Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն	18–27
Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում	28–31
Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում	32–38
Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները	39–41
Զարգացման մարտահրավերներ	42

2022-ի «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հիմնական ուղենիշները և ձեռքբերումները.

- ՈԱԱԿ-ը շեշտադրում է «որակը լսարանում» քաղաքականությունը, խրախուսում է դասախոսների կողմից իրենց աշխատանքի արդյունավետության հետազոտության իրականացումը,
- ՈԱԱԿ-ը խթանում է որակավարումների արժանահավատ շնորհումը ՄՈՒՀ-երում և շրջանավարտների մրցունակությունը ապահովող գործընթացները,
- ՈԱԱԿ փորձագետները շեշտադրում են ՄՈՒՀ-երում հետազոտության և միջազգայնացման առաջնահերթությունը կրթական գործընթացներում,
- Որակի արտաքին ապահովման գործընթացներն երաշխավորել են անկախ, անկողմնակալ և հիմնավորված փորձաքննություններ, որոնք հանահունչ են միջազգային չափանիշներին և որոնց արդյունքները ճանաչվում են ՀՀ ազգային և միջազգային շահակիցների կողմից,
- Շարունակական բարեփոխումների արդյունքում գրանցվել է որակի ապահովման գործընթացներում դասախոսների շեշտակի ավելացում,
- ՈԱԱԿ-ը միջազգային մակարդակում վստահելի գործընկեր է և ներգրավված է որակի ապահովման կառույցների միջազգային ցանցերի աշխատանքներում:

Հաջողության չափանիշ

ՈԱԱԿ-ի իրականացրած գործընթացները/մատուցած ծառայությունները ճանաչվում են որպես վստահելի աղբյուր և հանդիսանում են ուղեցույց մասնագիտական կրթություն տրամադրողների համար որակի շարունակական մշակույթի խրախուսման և ամրապնդման համար:

Փաստեր

Բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրում
2022 թվականին ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ է իրականացրել բարձրագույն ուսումնական 7 հաստատություններում.

- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,
- Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան,
- Հյուսիսային համալսարան,
- Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա,
- Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան,
- Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարան,
- Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ:

Հավատարմագրման որոշ գործընթացներ իրականացվել են հիբրիդային տարբերակով՝ ուսումնական հաստատությունների հետ համաձայնեցումից հետո

Հաշվետու տարում միջազգային փորձագետներ են ներգրավվել հետևյալ կազմակերպություններից

- Բարձրագույն ուսումնական հաստատությունների եվրոպական ասոցիացիա (EURASHE),
- Մորդովիայի Օգարյովի անվան պետական համալսարան,
- Վրաստանում բրիտանական համալսարան,
- Դուբլինի արվեստի և տեխնոլոգիաների ինստիտուտ,
- Միացյալ Թագավորության Բաթ Սփա համալսարան,
- Լեհաստանի բարձրագույն կրթության հավատարմագրման պետական կոմիտե,
- Ղազախստանի ազգային համալսարան:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Տեղացի և ուսանող փորձագետներ ներգրավվել են մի շարք հայաստանյան բուհերից, մասնավորապես

- Երևանի պետական համալսարան,
- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,
- Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան,
- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
- Գավառի պետական համալսարան,
- Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,
- Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,
- Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ,
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
- Հայաստանի եվրոպական համալսարան,
- ՀՀ կրթության տեսչական մարմին:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը կայացրել է հետևյալ 10 բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումները

- **Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոն՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Երևանի պետական համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 տարի ժամկետով, 6
- **Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Գավառի պետական համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով, 2
- **Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով, 2
- **Հյուսիսային համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 տարի ժամկետով: 6

Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ՄԿՈՒ հաստատություններ

2 մասնավոր

6 պետական

ՄԿՈՒ հաստատություններ

5 հավատարմագրվել են պետական ֆինանսավորմամբ

1 սեփական միջոցներով

Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ՄԿՈՒ հաստատություններ

Պետական ֆինանսավորմամբ հավատարմագրում անցնող ՄԿՈ հաստատությունների ընտրության նպատակով ՈԱԱԿ-ն իրականացրել է տվյալների հավաքագրում

- հաստատություն-գործատու համագործակցության,
- իրականացվող կրթական ծրագրերի,
- գործատու-դասախոսների,
- ուսանողների թվաքանակի վերաբերյալ:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Հավաքագրված տվյալների և Լիազոր մարմնի հետ քննարկումների արդյունքում ընտրվել են հետևյալ ուսումնական հաստատությունները.

- Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ,
- Մարտունու պետական բժշկական քոլեջ,
- Երևանի պետական հումանիտար քոլեջ,
- Երևանի հենակետային բժշկական քոլեջ,
- Երևանի հայ-հունական պետական քոլեջ

Նշված 5 ՄԿՈ հաստատություններին ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներին նախապատրաստելու նպատակով ՈԱԱԿ-ը կազմակերպել է 4-օրյա առցանց աշխատաժողով, որին յուրաքանչյուր հաստատությունից մասնակցել է 5 աշխատակից:

2022թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման են դիմել նաև 2 բժշկական ոչ պետական ուսումնական հաստատություններ՝ «Էրեբունի» բժշկական ակադեմիան և «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը կայացրել է հետևյալ 6 ՄԿՈ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշումները.

- **Տավուշի Պ. Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **«Էրեբունի» բժշկական ակադեմիա՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով, 4
- **Դիլիջանի պետական բժշկական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով, 2
- **Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով, 2
- **Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով, 2
- **Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ՝** ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով: 2

Մշտադիտարկումներ ՄՈՒՀ-երում

Շարունակական հետադարձ կապը և մասնագիտական ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումը կարևորելով՝ հաշվետու տարում ՈԱԱԿ-ն իրականացրել է **որակի ներքին ապահովման համակարգի և կրթական ծրագրերի մշտադիտարկումներ** ինչպես հավատարմագրված, այնպես էլ դեռևս հավատարմագրման գործընթաց չանցած հաստատություններում:

Հաշվետու տարում իրականացվել է որակի ներքին ապահովման համակարգի և **կրթական ծրագրերի 20 մշտադիտարկում բուհերում և 6 մշտադիտարկում ՄԿՈ հաստատություններում:** Հավատարմագրված ուսումնական հաստատություններում դիտարկվել են թերությունների վերացման գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքը, որակի ապահովման համակարգի ազդեցությունը փոփոխությունների կառավարման գործընթացում, կրթական ծրագրերի իրականացման, անհրաժեշտ դասախոսական կազմով համալրման, ենթակառուցվածքների և ռեսուրսների համապատասխանեցմանն ուղղված հաստատությունների քայլերը և գործողությունները:

Դեռևս հավատարմագրման գործընթաց չանցած ուսումնական հաստատություններում դիտարկվել է որակի ապահովման համակարգի ձևավորման ընթացքը՝ ուսումնական միջավայրի բարելավման, տարածաշրջանում ունեցած դերի շեշտադրմամբ:
Մշտադիտարկումների ավարտին հաստատությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումների շրջանակում ամփոփվել են հիմնական արդյունքները, նշվել են լավագույն փորձի օրինակները, բարելավման ենթակա ուղղությունները:

Մասնագիտությունների կրթական ծրագրեր

ՈԱԱԿ-ը, խթանելով ՄԿԾ-ների բարելավումը ՄՈՒՀ-երում, հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է **6 վերապատրաստում՝ «ՄԿԾ-ների բարելավման մեխանիզմները» թեմայով:** Վերապատրաստումներին մասնակցություն են ունեցել **14 բուհից 112 ներկայացուցիչներ**: Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների արձագանքը և կարիքը կրթական ծրագրերի վերանայման, դասավանդման արդյունավետ մոտեցումների զարգացման ուղղությամբ՝ **ՈԱԱԿ-ը 2023 թվականին նախատեսում է իրականացնել նոր վերապատրաստումների շարք՝ «Դասընթացի արդյունավետ կառավարման մեխանիզմները»** թեմայով:

Հաշվետու տարվա ընթացքում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների շրջանակներում փորձագետների կողմից ուսումնասիրվել է **21 մասնագիտության կրթական ծրագիր բուհերում և 24 մասնագիտության կրթական ծրագիր ՄԿՈ հաստատություններում**: Մասնագիտական հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ՝ դիտարկելու կրթական ծրագրերի իրականացման արդյունքում շնորհվող որակավորումների արժանահավատությունը:

Ռազմավարական նպատակ 1՝ Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Վերլուծելով հավատարմագրման գործընթացների, մշատադիտարկումների արդյունավետության գնահատման հարցաշարերի և մասնագիտական կրթության ոլորտի շահակիցների հետ հանդիպումների արդյունքները՝ հաշվետու տարում կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- իրագործվում են բուհերի ռազմավարական ծրագրերին աջակցող բարելավման ծրագրեր՝ հիմնված փորձագետների խորհրդատվությունների վրա,
- ՈԱԱԿ-ի մշտադիտարկումների և հավատարմագրումների արդյունքում բուհերում պլանավորում–իրականացում-գնահատում-բարելավում (այսուհետ՝ ՊԻԳԲ) շրջափուլը հիմնական գործիք է պլանավորելու ՄԿԾ-ների վերանայման գործընթացը, մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և բարելավման մեխանիզմների լավ փորձը տեղայնացվում և կիրառվում է տարբեր բուհերում,
- բուհերը ձգտում են ռեսուրսներ ներդրել բոլոր ներքին գործընթացների շրջափուլային վերանայման համար,
- բուհերի մեծամասնությունում գործընթացներն իրականացվում են մշակված ռազմավարությունների, ընթացակարգերի և քաղաքականությունների միջոցով,
- ՈԱԱԿ-ի մշակած քաղաքականության համապատասխան՝ ՄԿՈՒ հաստատությունները քայլեր են ձեռնարկում գործատուների հետ համատեղ ռազմավարությունների մշակման ուղղությամբ,
- ՄԿՈՒ հաստատություններում ներդրվում են որակի ներքին ապահովման գործընթացներ:

Հաջողության չափանիշ

Մասնագիտական կրթության խնդիրների և ուսանողների կարիքների վերաբերյալ հետազոտական հենքը մեծացել է: Ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացնելու համար առկա են բավարար քանակի մասնագետներ:

Փաստեր

Հետամուտ լինելով փորձագիտական կարողությունների զարգացմանը և այս միջոցով ՄՈՒՀ-երում որակի մշակույթի տարածմանը՝ ՈԱԱԿ-ը հաշվետու տարում շարունակել է իրականացնել տարբեր միջոցառումներ, մասնավորապես.

- վերապատրաստումներ,
- աշխատաժողովներ,
- քննարկումներ,
- փորձագետների բազայի համալրման աշխատանքներ:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ն իրականացրել է վերապատրաստումներ բուհերի և ՄԿՈ հաստատությունների ներկայացուցիչների համար (դասախոսներ, գործատուներ, ստորաբաժնումների ղեկավարներ, ՈԱ պատասխանատուներ) համալրելու փորձագիտական բազան: Վերապատրաստվել են շուրջ 90 մասնագետներ:

Հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությունների համար ձևավորված փորձագիտական խմբերի հետ:

Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում

2022 թվականին բուհերի և քոլեջների ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներում ընդգրկվել են **60 տեղացի և 8 միջազգային փորձագետներ** հեղինակավոր ուսումնական հաստատություններից ու կազմակերպություններից:

Հաշվետու տարվա ընթացքում «Ուսանող-փորձագետների պատրաստման» դասընթացին մասնակցել է շուրջ **80 ուսանող ՀՀ բուհերից և ՄԿՈՒ հաստատություններից**: **Վերապատրաստված ուսանողներից 15-ը** ներգրավվել են բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման համար ձևավորված փորձագիտական խմբերում: Դասընթացներին ուսանողների մասնակցության ընդգրկվածությունն ավելացնելու համար կիրառվել են նաև առցանց հարթակները՝ հնարավորություն տալով ներգրավելու ուսանողներ ՀՀ տարբեր մարզերից:

Փորձագիտական բազան այժմ համալրված է հասարակագիտական ոլորտն ընդգրկող փորձագետներով, այդուհանդերձ բժշկական, տեխնիկական, արդյունաբերական, արվեստի ուղղություններից ներկայացուցիչների ներգրավումը դեռևս մարտահրավեր է ՈԱԱԿ-ի համար:



2022 թ. վերապատրաստվել է 80 ուսանող-փորձագետ
ՀՀ բուհերից և ՄԿՈՒ հաստատություններից

Ռազմավարական նպատակ 2՝ ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Վերլուծելով հավատարմագրման գործընթացներին մասնակցած փորձագետների և ՄՈՒՀ-երի կողմից լրացված հարցաշարերի արդյունքները, դիտարկելով Հավատարմագրման Հանձնաժողովի կարծիքները՝ հաշվետու տարում կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- հավատարմագրման գործընթացներին մասնակցած **փորձագետները դեսպաններ են հանդիսանում որակի մշակույթի տարածման գործում** և ակտիվորեն ներգրավվում են ՄՈՒՀ-երում ընթացող բարեփոխումների իրականացմանը,
- ձևավորվել է **փորձագետների կրիտիկական զանգված,** որը խթանում է որակի ապահովման վերաբերյալ հետազոտությունների իրականացումը և ՄՈՒՀ-երում տվյալների հավաքագրումը,
- փորձագիտական զեկույցներում **կարևորվում է վերլուծական բաղադրիչը և թիրախային խորհրդատվությունները,**
- բուհերը դիտում են փորձագիտական **զեկույցները որպես իրենց զարգացմանն ուղղորդող գործիք:**

Հաջողության չափանիշ

Կրթության որակի մշակույթի շուրջ շահակիցների տարբեր խմբերի միջև հաղորդակցության և համագործակցության մեծացում:

Փաստեր

Շահակիցների հետ շարունակական համագործակցությունը և երկխոսության հարթակի ձևավորումը մշտապես խթանելու նպատակով իրականացվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

- աշխատաժողովներ,
- փորձի փոխանակման միջոցառումներ,
- թեմատիկ քննարկումներ
- ՄՈՒՀ-երի ՈԱ պատասխանատուների հետ հանդիպումներ,
- համաժողովներ:

Բուհերի ՄԿԾ-ների բարելավման հաջողված փորձի քննարկման շրջանակում 2022թ. ընթացքում իրականացվել է 1 աշխատաժողով, որի ընթացքում ՄԿԾ-ների բարելավման հաջողված փորձերը ներկայացրել ենՀՀ բուհերից 2 բանախոս՝ Շիրակի պետական համալսարանից և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից:

Ռազմավարական նպատակ 3՝Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Աշխատաժողովներ

ՇՊՀ-ի հաջողված փորձի քննարկման շրջանակում ներկայացվել են ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացները՝ շեշտադրում կատարելով ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմներին: ՀԳՊԱ-ի հաջողված փորձը ներառում էր կրթական ծրագրերի արդիականացումը, լավագույն փորձի տեղայնացումը, մոդուլային ծրագրերի առավելություններն ու մարտահրավերները: Աշխատաժողովը տեղի է ունեցել առցանց հարթակում՝ ներգրավելով **ՀՀ բուհերից շուրջ 100 ներկայացուցիչների:**

Հաշվետու տարվա ընթացքում Արցախի Հանրապետության 4 բուհերի՝ Արցախի պետական, Շուշիի տեխնոլոգիական, Մեսրոպ Մաշտոց և Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանների աշխատակիցների համար իրականացվել են կրթական ծրագրերի հավատարմագրման նախապատրաստմանը նվիրված աշխատաժողովներ: Աշխատաժողովին մասնակցել են շուրջ **30 ներկայացուցիչներ ԱՀ բուհերից:**

2022թ.-ին կազմակերպվել է աշխատաժողով՝ «ՄԿՈ հաստատությունների կարողությունների զարգացում» թեմայով: Աշխատաժողովն իրականացվել է առցանց հարթակում՝ ներգրավելով շուրջ **30 ՄԿՈ հաստատությունների ներկայացուցիչների:**

130 Մասնակից

30 Ուսումնական հաստատություն

3 Աշխատաժողով



Ռազմավարական նպատակ 3՝Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Համաժողով

2022թ. ՈԱԱԿ-ը կազմակերպել է նաև ՄԿՈ հաստատությունների համաժողով՝ **«Որակի ապահովումը՝ ապագայի հեռանկար»** խորագրով: Համաժողովի ընթացքում պանելային քննարկումներն իրականացվել են հետևյալ թեմաների շրջանակում՝ «Հավատարմագրման ազդեցությունը ՄԿՈՒ հաստատությունների որակի շարունակական բարելավման վրա», «Փորձագիտական կարողությունների ձևավորումը և դրա ազդեցությունը որակի ապահովման համակարգի զարգացման վրա»: **Համաժողովին մասնակցել են 75 քոլեջից շուրջ 170 ներկայացուցիչներ և փորձագետներ:**

ՄԿՈ հաստատությունների ՈԱ պատասխանատուների հետ իրականացվել են կլոր-սեղան հանդիպումներ, որտեղ քննարկվել են ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգի մարտահրավերները, դիտարկվել են հավատարմագրված և չհավատարմագրված ՄԿՈ հաստատություններում խնդիրների վերհանման մեխանիզմներն ու դրանց լուծման հաջողված փորձերը: **Կլոր-սեղան 2 քննարկումներին մասնակցել են 24 ՄԿՈ հաստատությունների ՈԱ պատասխանատուներ:**

170 Մասնակից

35 Ուսումնական հաստատություն

1 Համաժողով

Վերապատրաստումներ

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են և՛ թեմատիկ, և՛ փորձագիտական վերապատրաստումներ: Իրականացվել են **7 թեմատիկ վերապատրաստումներ**, որոնց ներգրավված են եղել բուհերի և ՄԿՈ հաստատությունների ներկայացուցիչներ:

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է **4 վերապատրաստում «ՄԿԾ բարելավման մեխանիզմներ» թեմայով**, որին մասնակցել են ՀՀ և ԱՀ բուհերի **112 ներկայացուցիչներ:**

2022 թ.-ին ուսանողների հետ իրականացվել են պարբերական քննարկումներ կրթական համակարգի խնդիրների վերաբերյալ, ԵՊՀ և ԲՊՀ կրթության կառավարման ոլորտում սովորող մագիստրանտների հետ քննարկվել են կրթության առանձնահատկությունները և որակի ապահովման համակարգի դերը: Հանդիպումների արդյունքում որոշ ուսանողներ ցանկություն են հայտնել շարունակել համագործակցությունը ՈԱԱԿ-ի հետ, իսկ **1 մագիստրանտ համալրել է ՈԱԱԿ-ի անձնակազմը:**

112 Մասնակից

7 Թեմատիկ վերապատրաստում

4 «ՄԿԾ բարելավման մեխանիզմներ»



Արտաքին հաղորդակցություն

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ն իրականացրել է ակտիվ արտաքին հաղորդակցություն: ՈԱԱԿ բոլոր միջոցառումները և իրադարձությունները լուսաբանվել են տարբեր հարթակներով՝ պաշտոնական կայքով (www.anqa.am), Facebook, Twitter և LinkedIn սոցիալական ցանցերի պաշտոնական էջերով և կից խմբերով, ՀՀ-ում գործող ԶԼՄ-ներով:

Լուսաբանվել է

- **հավատարմագրման 16 գործընթաց,**
- **26 մշտադիտարկում,**
- **12 վերապատրաստում,**
- **1 համաժողով,**
- **4 աշխատաժողով,**
- **միջազգային 8 համագործակցություն,**
- **շահակիցների հետ 14 հանդիպում:**

Հաշվետու տարին առանձնահատուկ էր ԶԼՄ–ների հետ համագործակցության, տեղեկատվական տեսանյութերի և վիզուալների հրապարակման, թեմատիկ հարցազրույցների կազմակերպման տեսանկյունից.

Ռազմավարական նպատակ 3՝Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Սոցիալական ցանցերում իրականացվել է **181 հրապարակում,**

www.anqa.am պաշտոնական կայքում տեղադրվել է **97 նորություն,**

ՀՀ–ում գործող ԶԼՄ–ների կողմից ՈԱԱԿ գործունեությունը լուսաբանվել է **19 անգամ,**



Էջի դիտելիությունը կազմել է 173,587հզ,

Էջի այցելությունները՝ 31,748հզ,

Էջի հավանումների քանակը ավելացել է 475–ով:

2021թ. համեմատությամբ էջի դիտելիությունը աճել է **141.4%-ով**, էջի այցելուների քանակը՝ **640.9%-ով**, էջի հավանումների քանակը՝ **25.3.%-ով:**

Ռազմավարական նպատակ 3՝Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Սոցիալական ցանցերում իրականացվել է **181 հրապարակում,**

www.anqa.am պաշտոնական կայքում տեղադրվել է **97 նորություն,**

ՀՀ–ում գործող ԶԼՄ–ների կողմից ՈԱԱԿ գործունեությունը լուսաբանվել է **19 անգամ,**

ՈԱԱԿ պաշտոնական կայքը՝ www.anqa.am, 2022թ. ընթացքում ունեցել է.



- 29,000 օգտատեր,
- 88,338 կայքի դիտում,
- 73,454 օգտատեր նախընտրել է www.anqa.am կայքը որոնման համակարգում բացված այլ կայքերից,
- կայքի դիտելիության միջինացված ժամանակը կազմում է 01:43:

Ըստ **Google Analytics–ի** վիճակագրական տվյալների՝ կայքի դիտելիությունը աճել է **0.25%-ով,** www.anqa.am կայքը նախընտրողների թիվը աճել է **4.85%-ով**, կայքում անցկացված միջինացված ժամանակահատվածը հասնում է **1:43–ի,** որը աճել է **8.47%-ով:**

Ռազմավարական նպատակ 3՝Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

Սոցիալական ցանցերում իրականացվել է **181 հրապարակում,**

www.anqa.am պաշտոնական կայքում տեղադրվել է **97 նորություն,**

ՀՀ-ում գործող ԶԼՄ-ների կողմից ՈԱԱԿ գործունեությունը լուսաբանվել է **19 անգամ,**

2022թ. ԶԼՄՆ-երի կողմից իրականացված լուսաբանումների տվյալները հետևյալն են



- ՈԱԱԿ տնօրեն Ռուբեն Թոփչյանի հարցազրույցներ՝ 3,
- ՈԱԱԿ աշխատակիցների հարցազրույցներ՝ 6,
- հավատարմագրման գործընթացի լուսաբանում՝ 2,
- համաժողովի լուսաբանում՝ 8:

Ընդհանուր առմամբ, ՈԱԱԿ գործունեությանը անդրադարձել է ՀՀ-ում և Արցախում գործող **28 ԶԼՄ**, որի մեջ մտնում են նաև լայն սփռում ունեցող մեդիաներ՝ **Հանրային հեռուստաընկերություն, Արմենպրես լրատվական գործակալություն, Հայաստանի հանրային ռադիո, Լրատվական ռադիո, Առավոտ օրաթերթ, 168 ժամ, Արցախպրեսս** և այլն:

Ռազմավարական նպատակ 3՝Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

2022թ. հատկանշական է նաև ՈԱԱԿ մասնագետների և փորձագետների թեմատիկ հարցազրույցների կազմակերպման տեսանկյունից: Իրականացվել են հարցազրույցներ հետևյալ թեմաներով.

- մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման մեխանիզմներ,
- իստիտուցիոնալ հավատարմագրման առանձնահատկությունները ՄԿՈ հաստատություններում,
- ինստիտուցիոնալ հավատարմագրման առավելությունները ՄԿՈ հաստատությունների համար,
- «Ուսանողության ձայն» նախագիծը՝ որպես ուսանող–փորձագետի վերապատրաստման հարթակ,
- ի՞նչ է նախահավատարմագրումը. մեկնաբանվում է Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի նախագծի շրջանակներում,
- ՀՀ կրթական համակարգի խնդիրներ. աշխատաշուկայի պահանջները բավարարող շրջանավարտից մինչև որակի ապահովման համակարգի դերը կրթական խնդիրների բացահայտման և լուծման գործում,
- ծրագրային հավատարմագրում. Ինչ է տալու բուհերին և ինչպես է իրականանալու,

Ռազմավարական նպատակ 3՝Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Վերլուծելով իրականացված միջոցառումների, վերապատրաստումների արդյունավետության գնահատման հարցաշարերն ու շահակիցների հետ հանդիպումների արդյունքները՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- Աճել է **երկխոսությունը շահակիցների հետ,** ինչպես նաև զարգացել են շահակիցների միջև հորիզոնական կապերը:
- ՈԱԱԿ փորձագետների միջոցով կրթական համակարգի զարգացման պահանջները և լավ փորձի տարածման քաղաքականությունը **արդյունավետորեն իրականացվում է ՀՀ և ԱՀ ՄՈՒՀ-երում:**
- ՈԱԱԿ-ը **ստեղծել է հարթակներ** դասավանդման արդյունավետ մոդելների քննարկման և փորձի փոխանակման համար, որտեղ ներկայացվում են հայաստանյան և միջազգային բուհերում առկա լավ փորձի օրինակները:
- Հասարակության շրջանում որակի ապահովման համակարգի զարգացման և առկա մարտահրավերների վերաբերյալ **իրազեկվածությունը զգալի բարձրացել է:**

Հաջողության չափանիշ

Տարեկան կտրվածքով հրապարակվում են թեմատիկ վերլուծություններ, հաշվետվություններ: Շահակիցները բավավարված են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացներից և դրանց իրավակարգավորումներից:

Փաստեր

Հաշվետու տարում ՈԱԱԿ աշխատակազմը իրավակարգավորումների կատարելագործմանն ուղղված մի շարք գործողություններ է իրականացրել. մասնավորապես գործող իրավակարգավորումներում, որոնք հիմնականում վերաբերում են կրթության ոլորտը կարգավորող օրենքներին և ենթաօրենսդրական ակտերին, առաջարկել է կատարել լրացումներ, փոփոխություններ, ներկայացրել է առաջարկությունների փաթեթ **«Բարձրագույն կրթության և գիտության մասին»**, **«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին»** ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ, ինչպես որակի ապահովման և հավատարմագրման կարգավորումների, այնպես նաև վերոնշյալ օրենքների նախագծերի բոլոր դրույթների վերաբերյալ:

2022 թվականին ՈԱԱԿ-ը մշակել է Բարձրագույն կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների, ինչպես նաև Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի պետական հավատարմագրման կարգերի նախագծերը: Նախագծերը մշակելիս ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքների նախագծերի կարգավորումներով, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքները տեղայնացնելով:

Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում

Մասնավորապես ուսումնասիրվել են

- որակի ապահովման,
- որակավորումների փոխճանաչման,
- միջազգային հավատարմագրումների,
- ծրագրային հավատարմագրման առանձնահատկությունների վերաբերյալ Էստոնիայի, Շվեցարիայի, Նիդերլանդների, Անգլիայի փորձը:

Նախագծերն ուղարկվել են Լիազոր մարմին՝ կարծիքի, ավելին՝ նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի պետական հավատարմագրման կարգի հայեցակարգային դրույթները քննարկվել են Լիազոր մարմնի, շահակից քոլեջների և ՄԿՈՒԶԱԿ-ի ներկայացուցիչների հետ:

Հաշվետու տարում նախորդ տարիներին ՈԱԱԿ ներքին իրավական ակտերի փոփոխություններով պայմանավորված՝ փոփոխվել և հաստատվել է ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը:

Ընթացքի մեջ են նաև նախնական ու միջին մասնագիտական կրթության հավատարմագրման պետական նոր չափանիշների և ձեռնարկի մշակումը:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ն իրականացրել է **Ուսանողական հարցման համակարգի** ներդրման համար Մեծ Բրիտանիայի և Ավստրալիայի փորձի ուսումնասիրություն, որի արդյունքում մշակվել է Ուսանողական հարցման համակարգի ծրագիրը, ներկայացվել է բուհերին, ՀՀ կենտրոնական բանկին և Լիազոր մարմնին՝ ծանոթանալու և համաֆինանսավորելու համար: Մասնակի ֆինանսավորման պատրաստակամություն հայտնել է ՀՀ ԿԲ-ն՝ պայմանով, որ շահակիցները ևս ֆինանսավորելու են ծրագիրը: Ծրագիրը դեռևս գտնվում է քննարկումների փուլում:

2022 թվականին **ՈԱԱԿ-ը գործարկել է Հավատարմագրման պետական նոր գրանցամատյանը,** որը կապված է Արտաքին գնահատման զեկույցների եվրոպական գրանցամատյանին:

Համակարգային վերլուծություն

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը նախաձեռնել է իրականացնել **«Որակավորումների արժանահավատ շնորհում»** թեմայով համակարգային վերլուծություն:

Հետազոտության նպատակն է վեր հանել բուհերում մասնագիտությունների կրթական ծրագրերի բարելավման լավ փորձը՝ ուսումնասիրելով որակավորումների արժանահավատ շնորհման որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը:

Հետազոտությունն իրականացնելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ընդգրկում է ՀՀ բոլոր հավատարմագրված բուհերը: Հետազոտության աշխատանքները կշարունակվեն 2023 թվականին:

Ուսումնասիրության ավարտին կներկայացվեն խորհրդատվություններ ՄՈՒՀ-երին և ՄԿԾ ղեկավարներին լավագույն փորձի ներդրման վերաբերյալ:

Ռազմավարական նպատակ 4՝ Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Դիտարկելով թեմատիկ վերլուծության արդյունքները՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- Գործող իրավակարգավորումները ապահովում են որակի արտաքին ապահովման արդյունավետ գործընթացների իրականացումը,
- Փորձագետների գնահատումները ընկալվում է որպես բարելավմանն ուղղված պահանջ ՄՈՒՀ-երում:

Հաջողության չափանիշ

ՈԱԱԿ-ի գործընթացները ճանաչվում են շահակիցների կողմից՝ որպես միջազգային լավագույն փորձի տարածման աղբյուր: ՈԱԱԿ-ը 2021-2022 թթ. հաջողությամբ պահպանելու է Եվրոպական բարձրագույն կրթության ասոցացիայի անդամակցությունը և Եվրոպական ռեգիստրում ընդգրկվածությունը:

Փաստեր

ՈԱԱԿ-ի միջազգայնացմանը և միջազգային փորձի տարածմանը խթանելու նպատակով իրականացվում են մի շարք միջացառումներ, մասնավորապես.

- եվրոպական ցանցերին ադամակցություն,
- միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցություն փորձի փոխանակման նպատակով,
- միջազգային ցանցերի և կառույցների կողմից կազմակերպված միջացառումներին և աշխատաժողովներին մասնակցություն,
- ՄԿՈ ոլորտում հայտնի Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) արտաքին գնահատումներին մասնակցություն,
- համատեղ հավատարմագրումների իրականացում,
- Բոլոնիայի թեմատիկ խմբերի աշխատանքներին ու մշակումներին մասնակցություն:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Հաշվետու տարվա ընթացքում Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից իրականացվող արտաքին գնահատման գործընթացի շրջանակներում առցանց այց է տեղի ունեցել միջազգային փորձագետների կողմից: **Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) փորձագիտական խումբը դրական եզրակացություն է տվել ՈԱԱԿ-ի գործունեությանը՝ եվրոպական ուղենիշներին և չափորոշիչներին համապատասխանության տեսանկյունից:** Տրված եզրակացության հիման վրա Որակի ապահովման եվրոպական ռեգիստրը **(EQAR)** և Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի **(ENQA)** խորհուրդը որոշում են կայացրել ևս **5 տարի ժամկետով հաստատելու ՈԱԱԿ-ի անդամակցությունը:**

ՈԱԱԿ գրանցումն EQAR-ում և ENQA-ում հայաստանյան բարձրագույն կրթական համակարգն առավել տեսանելի է դարձնում միջազգային ասպարեզում: **ՈԱԱԿ–ի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերի զեկույցները հասանելի են Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական շտեմարանում (DEQAR):**

2022 թվականին Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) Ընդհանուր վեհաժողովը երեք տարի ժամկետով ընտրել է ENQA Կառավարման խորհրդի անդամներին, և **ՈԱԱԿ տնօրենը երկրորդ անգամ երեք տարի ժամկետով ներկայացված է ENQA խորհրդի կազմում:** Ներգրավվածությունը ENQA խորհրդում հնարավորություն է տալիս քննարկելու որակի ապահովման ներկայիս միտումները և ներդնելու դրանք ՀՀ-ում իրականացվող կրթական բարեփոխումների գործընթացում:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի աշխատակազմը շարունակել է մասնակցել ENQA-ից կողմից կազմակերպված վեբինարներին և աշխատաժողովներին, որոնք նվիրված էին միկրոորակավորումների որակի ապահովման մեխանիզմների մշակմանը, որակավորումների փոխճանաչմանն ու որակի ապահովման համակարգի համատեղ գործընթացների իրականացմանը, հետքովիդյան մարտահրավերներին և այլն:

ՈԱԱԿ-ը հաշվետու տարվա ընթացքում **շարունակել է ադամակցությունը Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային (INQAAHE) և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների (CEENQA) ցանցերին:** Անդամակցությունների շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ աշխատակազմը մասնակցել է ցանցերի կողմից կազմակերպված փորձի փոխանակման միջացառումներին, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների **(CEENQA) ցանցի ամենամսյա հանդիպման ժամանակ ՈԱԱԿ-ը ներկայացրել է իր գործունեությունը և որակի ապահովման ոլորտում առկա լավ փորձը:**

2022 թվականին ՈԱԱԿ-ը, լինելով **ERASMUS+ SMARTI** (Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով) ծրագրի շահակից, ներգրավված է եղել ծրագրի շրջանակներում իրականացվող միջացառումներին: Մասնավորապես ՈԱԱԿ-ի աշխատակազմը մասնակցել է «Անգլերենը հատուկ նպատակների համար և Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգը» խորագրով վերապատրաստմանը, որակի ապահովման մոդուլի մշակմանը և ծրագրի որակի ապահովմանը: Աշխատանքները կշարունակվեն 2023թ.-ին:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը, անդակացելով Եվրոպական կրթական հիմնադրամին, մասնակցել է Հիմնադրամի կազմակերպած մի շարք միջոցառումների, **որոնք միտված են ՄԿՈ համակարգի լավ փորձի փոխանակմանն ու տեղայնացմանը:** 2022թ. ՈԱԱԿ աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված ՄԿՈ համակարգի արտաքին գնահատմանը **Մոնտենեգրոյում և Վրաստանում:** Արտաքին գնահատման նպատակն է աջակցել ՄԿՈ ոլորտում որակի ապահովման համակարգերի զարգացմանը և արդիականացմանը՝ միջազգային գործընկերների փոխադարձ գնահատման և նրանց կողմից տրամադրված հետադարձ կապի միջոցով:

2023 թվականին նախատեսվում է ԵԿՀ-ի կողմից ՀՀ ՄԿՈ համակարգի արդյունավետության գնահատումը:

ՈԱԱԿ-ի աշխատակազմը շարունակել է մասնակցել ԵԿՀ-ի կողմից կազմակերպված թեմատիկ քննարկումներին. մասնավորապես՝ 2023 թվականին իրականացված «Հայաստանում շինարարության ոլորտի ապագա հմտությունները» թեմայով հանդիպմանը: Հանդիպման ընթացքում տարբեր շահակիցների հետ քննարկվել են շինարարության ոլորտի ուսումնական հաստատություններում մասնագետների պատրաստման խնդիրները, ընդգծվել են այն կարևոր հմտություններն ու կարողությունները, որոնք պահանջված են ՀՀ աշխատաշուկայում, ինչպես նաև դիտարկվել են շինարարության զարգացման միտումները և դրան համարժեք մասնագետների հմտությունների շրջանակը:

2022 թվականին ՈԱԱԿ-ի երկու աշխատակիցներ, ներգրավված լինելով Բոլոնիայի թմատիկ խմբերի աշխատանքներում, մասնակցել են որակի ապահովման եվրոպական մոտեցումների տեղայնացմանը նվիրված քննարկումներին և ՀՀ-ում ինքնահավաստագրման գործընթացի կազմակերպման աշխատանքներին:

Որակի ապահովման թեմատիկ խմբի աշխատանքների շրջանակներում ՈԱԱԿ-ը ներկայացրել է շարժունության ծրագրերին մասնակցելու հայտեր: Շարժունության ծրագրերը կֆինանսավորվեն ԵՄ-ի կողմից: Ուսումնասիրման ենթակա թեմաներն ընտրվել են ԵԲԿՏ որակի ապահովման գործընկերային աջակցության խմբին ներկայացրած ՀՀ աշխատանքային պլանում ներառված կարիքներին համապատասխան: Մասնավորապես, նախատեսված է.

- **նախնական հավատարմագրման** փորձի ուսումնասիրություն Հոլանդիայի և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալությունում **(NVAO),**
- **ծրագրային հավատարմագրման** փորձի ուսումնասիրություն Հոլանդիայի և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալությունում և Բելգիայի հավատարմագրման գործակալությունում **(NVAO, VLHUR Belgium),**
- **միջազգային հավատարմագրումների և նախնական հավատարմագրումների** իրականացման փորձի ուսումնասիրություն Իտալիայի որակի ապահովման գործակալությունում **(ANVUR):**

Շարժունության այցերը նախատեսված են 2023 թվականին, որոնց արդյունքում կմշակվեն փոփոխությունների առաջարկներ Լիազոր մարմնին:

Ռազմավարական նպատակ 5՝ Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում

Որակավորումների շրջանակին համադրելի եռաստիճան համակարգի աշխատանքային խմբի գործունեության շրջանակում իրականացվել է միկրոորակավորումների տիրույթում SWOT վերլուծություն անդամ պետությունների շրջանում, այդ թվում՝ ՀՀ-ում:

Կատարվել են ինքնահավաստագրման նախապատրաստական աշխատանքները, մասնավորապես.

- մշակվել է ինքնահավաստագրման գործընթացի ճանապարհային քարտեզն ու գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցը,
- մշակվել է ինքնահավաստագրման մեթոդաբանությունն ու շրջանակը,
- համաձայնեցվել է աշխատանքային և հավաստող խմբերի ձևավորման ընթացակարգն ու կազմը,
- մշակվել է ինքնահավաստագրման զեկույցի բովանդակությունը:

Աշխատանքները կշարունակվեն 2023 թվականին:

Հետամուտ լինելով տարածաշրջանային համագործակցության ընդլայնմանը՝ 2022 թվականին **ՈԱԱԿ-ը** Ռուսական Ռեգիստր հավատարմագրման գործակալության հետ համատեղ Erasmus+ Jean Monnet ծրագրի շրջանակներում **իրականացրել է Ն.Փ. Օգարյովի անվան ազգային հետազոտական պետական համալսարանի «Կառավարում» կրթական ծրագրի հավատարմագրումը:** Գործընթացում ներգրավվել են ՈԱԱԿ երկու փորձագետներ:

ՈԱԱԿ մասնագետների կողմից դիտարկվել է նաև Ռուսական ռեգիստրի կողմից իրականացվող հավատարմագրման գործընթացը Եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին (ESG) համապատասխանության տեսանկյունից, և կազմվել է զեկույց:

Միջազգային լավագույն փորձի տեղայնացման ու տարածման նպատակով ՈԱԱԿ-ը շարունակական հանդիպումներ է ունենում փորձագետների, ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների և ուսանողների հետ:

Վերլուծելով միջազգայնացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- **ՈԱԱԿ-ն ապահովում է** ՀՀ պետական հավատարմագրումների ճանաչելիությունը միջազգային մակարդակում,
- **ՈԱԱԿ-ը որպես վստահելի գործընկեր** ներգրավվում է տարածաշրջանում իրականացվող որակի ապահովման գործընթացներին,
- **ՈԱԱԿ-ի տնօրենը վերընտրվել է** Եվրոպական բարձրագույն կրթության որակի ապահովման Կառավարման խորհդի անդամ,
- **ՈԱԱԿ-ի երկու աշխատակիցները ներգրաված են** ԵԲԿՏ թեմատիկ խմբերի կողմից իրականացվող բարեփոխումների քաղաքականության մշակման աշխատանքներում,
- **ՈԱԱԿ-ի ձևաչափերը դիտարկվում են** որպես լավ փորձի օրինակ միջազգային մակարդակում:

Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

Հաջողության չափանիշ

ՈԱԱԿ-ի աշխատակազմի բոլոր ներկայացուցիչները կիսելու են ՈԱԱԿ-ի ապագայի նկատմամբ ընդհանուր տեսլականը: ՈԱԱԿ-ը կդառնա գրավիչ գործատու՝ ներգրավելով կրթության ոլոտի լավագույն փորձագետներին իր տարբեր նախագծերում՝ ապահովելով ճկուն կառավարման քաղաքականություն:

Փաստեր

- Հաշվետու տարում ՈԱԱԿ աշխատակազմի կարողությունների զարգացման միտված քաղաքականությունն իրականացրել է միջազգային վեբինարներին և վերապատրաստումներին մասնակցությամբ:
- Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի բոլոր մասնագետները՝ ըստ իրենց մասնագիտական ուղղվածության, մասնակցել են եվրոպական որակի ապահովման կառույցների կողմից կազմակերպված վերապատրաստումներին և աշխատաժողովներին:
- 2022-ին ՈԱԱԿ երկու աշաիատակիցներ դարձել են Բոլոնիայի հետամուտ խմբի երկու թեմատիկ աշխատանքային խմբերի (Որակի ապահովում և Որակավորումներ շրջանակ) անդամներ: Աշխատանքային խմբերում ներգրավվածությունը ապահովում է կարողությունների զարգացման ձեռք բերումը և դրանց կիրառումը բարեփոխումների համատեքստում:

Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

ՈԱԱԿ աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացումը իրականացվել է նաև.

- ՄՈՒՀ-երի աշխատակիցների համար կազմակերպվող վերապատրաստումների փաթեթների մշակմանը **աշխատակազմի մասնակցությամբ՝ որպես վերապատրաստողներ հանդես գալով,**
- սկսնակ մասնագետներին, կամավորներին հավատարմագրման գործընթացներում **որպես փորձագիտական խմբերի համակարգողի օգնական ներգրավելով** (հաշվետու տարվա ընթացքում հավատարմագրման բոլոր գործընթացներում ներգրավվել են կամավորներ, **որոնցից մեկը համալրել է ՈԱԱԿ աշխատակազմը),**
- հավատարմագրման գործընթացներում ներգրավված փորձագետներին ՈԱԱԿ-ի մշակումներում ներգրավմամբ **(հաշվետու տարվա ընթացքում երկու փորձագետներ ներգրավել են հավատարմագրման ձեռնարկի և վերապատրաստումների փաթեթների մշակման գործընթացում):**

ՈԱԱԿ-ը կիրառվում է ներքին սեմինարի մեթոդը տարբեր թեմաների քննարկման և փորձի փոխանակման նպատակով: Փորձի փոխանակման նպատակով աշխատակազմի անդամները նաև կանոնավոր կապի մեջ են տեղացի և միջազգային փորձագետների հետ:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է ՄՈՒՀ-երի դասախոսական և վարչական կազմի լավագույն մասնագետներին ներգրավել որակի արտաքին ապահովման գործընթացներում:

Ռազմավարական նպատակ 6՝ ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Վերլուծելով ներքին և արտաքին շահակիցների շրջանում կատարված հարցումները և ՈԱԱԿ-ի աշխատակազմի շրջանում իրականացված SWOT վերլուծությունը՝ կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

- Գործում է **երիտասարդ մասնագետների կարողությունների զարգացման** և հավատարմագրման գործընթացների շարունկական բարելավման մեխանիզմ:
- ՈԱԱԿ-ը շարունակաբար **արձագանքում է իր շահակիցների կարիքներին՝** ընդլայնելով որակի ապահովման գործընթացների արդյունավետությունը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Որպես զարգացման մարտահրավերներ՝ ՈԱԱԿ-ն առանձնացրել է հետևյալը.

- Միջազգային հավատարմագրումներում մասնակցության ընդլայնում:
- Ուսանողական ազգային հարցաշարի ստեղծում պետական և մասնավոր հատվածի շահակիցների հետ՝ ուսանողների կարծիքը դիտարկելով որակի ապահովման թափանցիկության ցուցիչ:
- Կրթական ծրագրերի ստեղծման ամբողջական շրջափուլի մշտադիտարկում նախահավատարմագրման և հավատարմագրման գործիքների միջոցով:
- ՈԱԱԿ կանոնադրական նպատակների ընդլայնում, որը կապահովի 2030 ռազմավարության իրականացում և ՈԱԱԿ-ի միջազգային գործունեության ընդլայնում:
- Կրթական գործընթացների հետազոտության համար հարթակի ստեղծում: